ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«01» հունիսի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի փոքրիկներ, հարգելի ծնողներ

Շնորհավորում եմ բոլորիդ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ:

Այս օրը մանուկներին անսահման ժպիտներ և երջանիկ ակնթարթներ պարգևելուց բացի մի հստակ ուղերձ ունի՝ ևս մեկ անգամ վեր հանել երեխաներին առնչվող բոլոր խնդիրները և օր առաջ քայլեր ձեռնարկել դրանց լուծման համար:

Յուրաքանչյուր երեխա ունի մեր պաշտպանության, սիրո և ամենօրյա հոգատարության կարիքը: Ինչպես հունիսի 1-ին, անպես էլ ամեն օր պետք է ձգտենք ապահովել մեր փոքրիկների անհոգ, առողջ մանկությունը:

Շնորհավոր ձեր ամենալուսավոր տոնը, սիրելի փոքրիկներ, դուք եք մեր ապագան, ու շատ կարևոր է, որ լավ մարդ ու հայրենիքին պիտանի քաղաքացի մեծանաք:

Առանձնահատուկ շնորհավորում եմ նաև ձեզ, սիրելի ծնողներ, քանզի ձեր ուսերին է դրված մանուկներին ընտանեկան ջերմությամբ շրջապատելու, արժանապատիվ սերունդ դաստիարակելու առաքելությունը:

Թող մեր երեխաների ապագան լինի միշտ արևոտ, իսկ երազանքները իրականություն դառնան կապույտ ու խաղաղ երկնքի ներքո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ